



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 143

### ՈՂԲ ԵՒ ԶՂՋՈՒՄ

**Տէր**, լսէ իմ աղօթքս, դուն՝ որ հաւատարիմ ես՝ ականջ դիր աղաչանքներուս, դուն՝ որ արդար ես՝ պատասխան տուր ինձի: Ես քու ծառադ եմ, զիս դատաստանի մի՛ ենթարկել, որովհետեւ չկայ կենդանի արարած մը որ քու դիմացդ արդարանայ: Թշնամին զիս հալածեց, կեանքս հողին հաւասարցուց, եւ զիս խաւար աշխարհին բնակիչ դարձուց, արդէն մեռած մարդոց պէս: Զոգիս խռովքի մէջ է, սիրտս կը սոսկայ: Կը յիշեմ անցեալ ժամանակները, կը խորհիմ քու բոլոր գործերուդ մասին, կը խոկամ ըրածներուդ մասին: Ձեռքերս քեզի կ'երկարեմ օգնութեան համար. ծարաւ հողի պէս՝ հոգիս ծարաւ է քեզի: Շուտ ըրէ, Տէր, պատասխան տուր, հոգիս արդէն կը մարմնի, ինձմէ երես մի՛ դարձներ, մի՛ ձգեր որ ողջ-ողջ գերեզման իջնեմ: Ամէն առաւօտ ինձի սերդ լսել տուր, որովհետեւ ես քեզի վստահեր եմ: Ահա քեզի կը դիմեմ, ցոյց տուր՝ ինչ ձեւով կ'ուզես որ ապրիմ: Տէր, ազատէ զիս թշնամիներէս, ես քեզ իմ ապաւէնս դարձուցի: Քու կամքդ կատարել սորվեցուր ինձի, որովհետեւ իմ Աստուածս ես դուն. քու բարի Զոգիդ զիս ուղիղ ճամբով թող առաջնորդէ: Տէր, քու անունդ փառաւորելու համար՝ ազատէ կեանքս. դուն՝ որ արդար ես, այս նեղութենէն դուրս բեր իմ անձս: Ինձի հանդէպ սերդ ցոյց տուր. թշնամիներս ոչնչացուր, բնացնջէ բոլոր անոնք որոնք ինձի նեղութիւն կու տան, որովհետեւ քու ծառադ եմ ես:

### ՆԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԸ



## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

9:1-26

### ՄԵՂՔ ԵՒ ՊԱՏԻԺ (9:1-16)

Ասկէ առաջ ալ ըսուեցաւ, որ Ասրուաձաշնչական մարգարէն Ասրուծոյ պարգամները փոխանցող անձը չէ միայն, այլ նաեւ Ասրուծոյ ժողովուրդին, այս պարագային Իսրայէլին հետ փառապողը, ցաւ զգացողը, որուն համար ալ յանձն կ'առնէ երթալու այդ ժողովուրդին խօսելու, Ասրուծոյ պարգամները փոխանցելու, որպէսզի մի գուցէ եթէ լսեն ու զղջալով վերադառնան Ասրուծոյ որպէսզի Ասրուաձա՞ ալ փրկէ զիրենք: Ահա այդ կացութեան մէջ է Երեմիա մարգարէն: Շարունակելով նախորդ հարուածը, որ աւարտեցաւ այնպիսի մտաւորութեամբ, թէ արդեօք «բալասան կամ բժիշկ չկայ» որպէսզի իմ ժողովուրդիս աղջիկը բժշկութիւն գտնէ (8:22): Այնքան ահաւոր է վիճակը եւ զայիք կոտորածը, որուն համար ալ մարգարէն այդ ցարը կը զգայ: Այնպէս ինչպէս երբ պահ մը պարգապէս ականապէս կ'ըլլանք այն դէպքերուն ու կոտորածներուն, որոնք ցոյց կը տրուին լուրերէն, որքան կ'ազդուինք, կը նեղուինք, հակառակ այն իրողութեան, որ կրնայ մեզի հետ անմիջական կապ չունենալ, բայց մարդկային մեր կապը, յաճախ մեզ կը դնէ այնպիսի վիճակի մը մէջ ուր ցաւ կը զգանք եւ չենք կրնար անտարբեր մնալ: Որքան առաւել եւս երբ անմիջական կապ կայ: Ահա այդ կացութեան մէջ է Երեմիա մարգարէն ի քես իր ժողովուրդի գաւակներուն կոտորածին, որուն համար կ'ըսէ. «**Երանի թէ գլուխս ջուրի ու աչքերս արցունքի աղբիւր ըլլային, որպէսզի ցերեկ ու գիշեր լայի իմ ժողովուրդիս աղջկան սպանուածներուն համար**» (1 հմբ):

Եւ կամ հեռանար անոնցմէ, եւ երթար անապատ քեզ մը հոն իջեւանելու, որովհետեւ «**ամենքը շնացողներ են ու նենգաւորներու ընկերութիւն են**» (2 հմբ): Այսինքն՝ բոլորն ալ խտրութեան ու հեռացան Ասրուծմէ: Առաւել եւս, իրենց լեզուները փոխանակ օգրագործելու ճշմարտութիւնը խօսելու, ընդհակառակը՝ սրտութիւն է որ կը խօսին (3 հմբ): Տեսէք, ինչպիսի կացութիւն կը փրկէ, որ ալ կարելի չէ վստահիլ նոյնիսկ ընկերոջ, առաւել՝ նոյնիսկ եղբոր: Ինչ ահաւոր է վիճակը, երբ ալ չկայ մէկը որուն կրնաս ապահինիլ, վստահիլ, որովհետեւ բոլորն ալ կը սպեն, կը խաբեն ու ճշմարտութիւնը չեն խօսիր, եւ այդ իսկ պարճառով չեն ուզեր զԱսրուաձա՞ անչնալ (4-6 հմբ):

Ինչ պէտք է ընէ Տէրը, երբ Իր իսկ ժողովուրդը, փոխանակ արդարութեամբ, սրբութեամբ եւ ճշմարտութեամբ կենք ապրելու, կ'ապրի նենգութեամբ, «**լեզուով խաղաղութեամբ կը խօսի, բայց սրտով դարան կը պարտասարէ**» (8 հմբ): Չարութիւնը այնքան գլուխ առած գացած է, որ միայն մէկ բան կայ որ պիտի ընէ Տէրը. «**հալեցնեմ ու փորձեմ**» (7 հմբ): Այնպէս ինչպէս ոսկին կը հալեցնեն ու կը փորձեն, որպէսզի անով գտնուի ու մաքրուի, նոյնպէս ալ ժողովուրդի պարագային, որպէսզի եր դառնան իրենց սխալ ընթացքէն: Բայց անոնք պիտի մնան անդրդուելի: Անոր համար ալ անոնց քաղաքը ամբողջութեամբ պիտի կործանի, Երուսաղէմը ատերակ, չազալներու բնակարան պիտի ընէ Տէրը, եւ Յուդայի քաղաքները անբնակ ու ամայի (10-11 հմբ):

Ահա Տէրը հարց կու տայ, թէ արդեօք չկայ մէկը, որ հասկնայ այս բոլորը ինչո՞ր կը պարտասարէ (12 հմբ): Ըստ երեւոյթին, մարգարէն բացի չկար մէկը: Տէրը կը պարտասարէ. «**որովհետեւ անոնք իմ օրէնքս ձգեցին, ձայնս մարիկ չըրին, իրենց սրտին կամակորութեան եւ Բահաղամին երեւեմ գացին**» (13-14 հմբ), այսինքն՝ օտար չաստուածներու երեւեմ: Այդ իսկ պարճառով, դառն, լեղի, թունաւոր պիտի կերցնէ եւ դառն ջուր խմցնէ, եւ օտար ազգերու մէջ ցիրուցան: Ազգեր, որոնք ոչ իրենք եւ ոչ ալ իրենց նախահայրերը ճանչցան: Տակաւին, անոնց վրայ ալ սուր պիտի բերէ, որպէսզի կոտորէ (15-16 հմբ): Սուրը նաեւ խորհրդանիշ է դարաստարանի:

### ԵՐՈՒՄԱՐԷՄԱՅԻՆԵՐԸ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՐԵՆ (9:17-26)

Չարութիւնը այնքան շարճաւ, իսկ ժողովուրդը փակաին անտարբեր է, Տէրը խորհուրդ կու տայ, ըսելով. «**լալկան կիներ կանչեցեք**» (17 հմբ), որպէսզի ձեզի համար լան ու ձեզ լացնեն, անով դարձի ու ապաշխարութեան առիթ ըլլայ մի գուցէ: Որովհետեւ մահը ամենուրեք պիտի փարածուի (21 հմբ): Որովհետեւ Տէրը կ'ըսէ. «**ոնե՛ մէկը ոնե՛ մէկ բանով չպարճենայ, միայն Տիրոջմով. ո՛չ իմաստութեամբ, ո՛չ զօրութեամբ, ո՛չ ալ հարստութեամբ**» (22 հմբ), ինչպէս նոյնը պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «**ով որ պիտի պարճենայ թող Տիրոջմով պարճենայ**» (Ա Կորնթ 1:31): Այն Տիրոջմով, որ «**ողորմութիւն, իրաւունք ու արդարութիւն կ'ընէ**» (24 հմբ):

«**Ահա օրեր պիտի գան, երբ Տէրը պիտի այցելէ բոլոր թլփապուածներն ու անթլփապուածները**» (25-26 հմբ), այսինքն՝ դարաստարանի նստի անոնց հետ: Որովհետեւ խորքին մէջ բոլորն ալ անթլփապ են: Նոյնիսկ թլփապուածները, այսինքն՝ Իսրայէլի ժողովուրդը, որ արտաքնապէս թլփապուած է, բայց խորքին մէջ սրտով անթլփապ է, որուն համար ալ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «**իսկական թլփապութիւնը հոգիով թլփապութիւնն է եւ ոչ թէ մարմնաւոր**» (Հռոմ 2:26-27):